ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՇԱԿ ԿԱՐԵՆԻ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԽԹԱՆ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Զոյա Աղվանի Թադևոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թորոս Շահենի Թորոսյան

տնտեսագիտության թեկնածու Սամվել Ավագի Սահակյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի հունիսի 14-ին, ժամը $14^{\underline{00}}$-ին Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի թիվ 008 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0051, ք.Երևան, Հ. Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թվականի մայիսի 14-ին:

008 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Սուվարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Տարածաշրջանային համագործակցությունը երկար ժամանակ ամբողջ աշխարհում ծառայում էր որպես տնտեսական աճի և քաղաքական կայունության ապահովման գործիք: Հարյուրամյա պատերազմներից հետո Եվրոպա աշխարհամասում Եվրամիության դրոշի ներքո միավորված երկրների բարեհաջող ինտեգրումը մի շարք զարգացող տարածաշրջանների համար դարձավ հակամարտություններից խուսափելու և ազգային տնտեսության զարգացմանը ձգտելու նոր ազդակ: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո առաջին տասը տարիների ընթացքում զարգացող երկրների միջև տարածաշրջանային համագործակցության ջանքերի մեծ մասը կարելի է որակել որպես տարածաշրջանային շուկաները միջազգային մրցակցությունից պաշտպանելու (Լատինական Ամերիկա), կամ ապագաղութացման հետևանքով ստեղծված իրավիճակի հաղթահարման անհրաժեշտությամբ պայմանավորված գործողություն, որը, հատկապես Աֆրիկայում, հանգեցրեց ինտեգրված գաղութային տնտեսական ռեժիմների փլուզմանը: Սակայն վերջին ժամանակաշրջանում, հակառակը, տարածաշրջանային համագործակցության ջանքերը կառուցվում են, այսպես կոչված, «նոր տարածաշրջայնացման» հենքի վրա, որի պահանջը ոչ միայն երկրների խմբի տարածաշրջանային համագործակցության զարգացումն է, այլև մնացած աշխարհի հետ փոխազդեցության ու փոխգործության խորացումը:

Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ հանրապետությունները բախվեցին տնտեսական և քաղաքական ապահինտեգրման՝ հսկայական մասշտաբների հասնող հիմնախնդիրների հետ: Տնտեսական ապահինտեգրումը կանխելու փորձերը պսակվում էին անհաջողությամբ: Մասնավորապես, Անկախ պետությունների համագործակցությունը չկարողացավ բաց սահմանները, առևտուրը, տրանսպորտը, կապիտալի շարժունակությունը պահպանել այն վիճակով, որը գոյություն ուներ Միության գոյության տարիներին: Այդ երկրների տնտեսություններում տեղ գտած խորը տնտեսական ճգնաժամերը, որոշ չափով, կարելի է բացատրել նաև տնտեսական տարածաշրջանի վերացմամբ:

Այդ ժամանակաշրջանից ի վեր երբեմնի հսկայական պետության մաս կազմող երկրներում ձեռնարկվում են ամենատարբեր միջոցառումներ տարածաշրջանային համագործակցությունը խորացնելու, փոխհամաձայնեցված տնտեսական գործընթաց-ներ իրականացնելու ուղղությամբ: Դրանցից հատկապես ուշադրության է արժանի Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ), Համագործակցության շանհայան կազմակերպությունը, Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնտեսական համագործակցության ֆորումը:

Տարածաշրջանային համագործակցությունը հատկապես կարևոր է դեպի ծով ելք չունեցող երկրների համար: Որպես կանոն, այդ երկրներն ունեն հարևաններ, որոնց հետ համագործակցության խորացումը կարևոր դերակատարություն ունի ոչ միայն տարածաշրջանային ինտեգրումը զարգացնելու համար, այլ նաև համաշխարհային շուկա մուտք գործելու տեսանկյունից: Տարածաշրջանային կազմակերպությունների ձևավորման գործընթացը ոչ միշտ է վերացնում համագործակցության խոչընդոտները: Տարածաշրջանային կազմակերպությունները կարող են մնալ թույլ կամ պարզապես անգործունակ, եթե անդամ երկրները չեն ցանկանում վարել լուրջ, կենսունակ

բանակցություններ և երկխոսություն, հարստացնել անհրաժեշտ տեխնիկական ներուժը և ներդնել անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ: Նման միավորումները չեն կարող հասնել հաջողությունների, եթե անդամ-պետությունները չեն ցանկանում ընդգրկվել կազմակերպության շրջանակներում իրականացվող ինտեգրացիոն գործընթացներին, կապվել գործընկերների հետ ինչ-որ պայմանավորվածություններով, հետևել սահմանված ընդհանուր կանոններին, միմյանց հետ մտնել փոխադարձ կապերի մեջ՝ այդ ճանապարհով փորձելով չհրաժարվել ազգային ինքնուրույնության որոշակի կորստից: Սակայն առանց փոխհամաձայնեցված գործողությունների, որոնք կարգավորվում են տարածաշրջանային վստահելի կազմակերպության կողմից, տարածաշրջանային համագործակցությունը, վերջին հաշվով, վերածվում է անարդյունավետ ձեռնարկման: Հենց այդ նկատառումներով, կարևորվում է համաշխարհային տնտեսությունում արդյունավետ գործող տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումների փորձի ուսումնասիրությունը:

Միևնույն ժամանակ հատկապես անցումային տնտեսություն ունեցող Հայաստանի Հանրապետության համար կարևոր դերակատարություն ունի ներդրումային քաղաքականությունը՝ մրցունակության բարձրացման, համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու և տնտեսությունն արդիականացնելու նկատառումներից ելնելով: ՀՀ տնտեսության արդիականացման գործընթացը անհնար է պատկերացնել առանց տարածաշրջանային ներդրումային գործընթացներին ինտեգրման: Հատկապես ԵԱՏՄ ձևավորման համատեքստում, անդամ երկրների համար կարևոր խնդիր է դարձել նոր ներդրումային քաղաքականության ձևավորումը, «գիտություն - ձեռնարկատիրական գործունեություն - պետություն» եռանկյունու արդյունավետ փոխազդեցությունը, համագործակցող երկրների գիտատեխնիկական, տնտեսական, ֆինանսական և կազմակերպչական հնարավորությունների ինտեգրումը՝ ներդրումային գործունեության ոլորտում: ՀՀ տարածաշրջանային համագործակցությունը պետք է ուղղված լինի ազգային ներդրումային շուկայի զարգացմանը և ներդրումների խթանմանը: ՀՀ և տարածաշրջանի երկրների միջև ներդրումային գործունեության ներդաշնակեցման հիմնախնդիրների լուծման ալգորիթմը կարելի է համարել ներդրումային համագործակցության ընդլայնումը, ինչպես հարևան երկրների, այնպես էլ ԵԱՏՄ անդամ երկրների հետ, ինչն էլ պայմանավորում է սույն ատենախոսության թեմայի ***արդիականությունն ու անհրաժեշտությունը:***

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն ատենախոսական հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել և գնահատել ՀՀ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման հնարավորությունները՝ տարածաշրջանային տնտեսական համագործակցության զարգացման պայմաններում: Նշված նպատակի իրականացումը ենթադրում է որոշակի խնդիրների և դրանց լուծումների առաջադրում, մասնավորապես.

- ✓ ուսումնասիրել տարբեր տարածաշրջանային ինտեգրացիոն կառույցների էվոլյուցիոն զարգացումը և վերլուծել դրանց առանձնահատկությունները,
- ✓ բացահայտել տարածաշրջանային համագործակցության ազդեցությունն օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացների վրա,
- ✓ բազմակողմ վերլուծությունների հիման վրա գնահատել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ներդրումային հնարավորութ-

յունները, մատնանշել համագործակցության այն նախընտրելի ոլորտները, որոնք կնպաստեն ՀՀ տնտեսական զարգացմանը,

- ✓ բացահայտել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ներդրումների ներգրավման հիմնախնդիրները, առաջադրել դրանց լուծման գործնականում հնարավոր տարբերակները,
- ✓ ուսումնասիրել ՀՀ և հարևան երկրների՝ Վրաստանի ու Իրանի հետ ձևավորված ներդրումային հարաբերությունների փաստացի վիճակը և մշակել այդ գործընթացները խթանող միջոցառումների համալիր՝ տարածաշրջանային տնտեսական համագործակցության զարգացման համատեքստում,
- ✓ քանակական վերլուծությունների հիման վրա գնահատել ՀՀ-ԵԱՏՄ-հարևան երկրներ ներդրումային համագործակցության հնարավորությունները, վեր հանել առկա հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման նոր մոտեցումներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ տարածաշրջանային ինտեգրման և ներդրումային համագործակցության զարգացման գործընթացներն են, իսկ առարկան՝ տարածաշրջանային ներդրումային համագործակցության ապահովման համակարգն է:

Ուսումնասիրության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջ քաշված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել հայրենական և օտարերկրյա աշխատություններում ներդրումների ներգրավման և տարածաշրջանային համագործակցության տեսական հիմնադրույթները լուսաբանող գիտական աշխատությունները, տարածաշրջանային տնտեսական համագործակցության համաձայնագրերը: Հետազոտության իրականացման ժամանակ օգտագործվել են գիտական վերացարկման, համակարգային և համեմատական վերլուծության, խմբավորման, էմպիրիկ միջճյուղային հետազոտության, մաթեմատիկական վիճակագրության, փորձագիտական գնահատման, էկոնոմետրիկ, վիճակագրական վերլուծության և պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության մեթոդները:

Վիճակագրական և վերլուծական տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ազգային և միջազգային մասնագիտացված տարբեր կառույցների՝ Միավորված Ազգերի Կազմակերպության, Համաշխարհային բանկի, Առևտրի Համաշխարհային Կազմակերպության, Եվրամիության, Անկախ Պետությունների Համագործակցության, Եվրասիական Տնտեսական Միության և այլ միջազգային կառույցների կողմից հրապարակված պաշտոնական տվյալներն ու նյութերը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- ✓ Մշակվել է տարածաշրջանային ներդրումային համագործակցության մեխանիզմ, որում որպես կառուցվածքային տարրեր կարևորվել են ներդրումային համագործակցության սկզբունքները, զարգացման ռազմավարությունը և կազմակերպա-տնտեսական ասպեկտները, և հիմնավորվել է դրանց կիրառման նպատակահարմարությունը տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում:

- ✓ Գնահատվել է Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ մյուս երկրների արտաքին առևտրի ու ներդրումային համագործակցության միջև առկա կախվածությունը գծային մաթեմատիկական մոդելի միջոցով և բացահայտվել է, որ ՀՀ-ԵԱՏՄ արտաքին առևտրի աճն ուղղակի դրական ազդեցություն ունի այդ երկրներից ներհոսած կապիտալ ներդրումների վրա:
- ✓ Գնահատվել է ՀՀ, հարևան և ԵԱՏՄ անդամ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների և օտարերկրյա ներդրումների հոսքերի կապը: Կառուցվել է էմպիրիկ մոդել, որի միջոցով բացահայտվել և համապատասխան գործակիցներով ներկայացվել են ներդրումների հոսքերի վրա առավելագույն դրական (արդյունաբերական արտադրության ծավալ, գնաճի կայունություն, արժութային ցնցումներ) կամ բացասական (իրական ցնցումներ, ՀՆԱ մոնետարիզացիա) ազդեցություն ունեցող ցուցանիշները:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ստացված գիտական արդյունքները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման և տարածաշրջանային համագործակցության խորացմանն ուղղված միջոցառումների ու հայեցակարգերի մշակման համար, ինչպես նաև՝ հիմք ծառայել տարբեր հետազոտությունների և ուսումնասիրությունների համար: Ատենախոսության արդյունքները կարևորվում են նաև տարածաշրջանային համագործակցության գործնական հիմնախնդիրների լուծման տեսանկյունից, քանի որ ուսումնասիրության արդյունքում առաջ քաշված առաջարկությունները և միջոցառումները ուղղված են տարածաշրջանի երկրների հետ ՀՀ ներդրումային համագործակցության զարգացմանն ու խթանմանը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքի հիմնական արդյունքները քննարկվել են ՀՊՏՀ «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» XXV միջազգային գիտաժողովի ընթացքում, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի նիստում, ազգային և միջազգային մի շարք այլ գիտաժողովներում:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի 4 գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության ծավալն առանց հավելվածների կազմում է 127 էջ, և պարունակում է 17 աղյուսակ, 11 գծապատկեր և 17 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածությունում*** հիմնավորվել են թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, առաջադրվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվել՝ օբյեկտը և առարկան, ձևակերպվել՝ գիտական արդյունքներն ու նորույթը, ուղենշվել՝ տեսական և գործնական կիրառման հնարավորությունները, ինչպես նաև ներկայացվել են աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«Տարածաշրջանային տնտեսական համագործակցության հայեցակարգային մոտեցումները»*** գլխում ներկայացվել և լրամշակվել են ինտեգրման գործընթացների տեսական ու մեթոդական հիմքերը, ուսումնասիրվել են տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների առանձնահատկությունները Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրի և Եվրամիության շրջանակներում, գնահատվել է ինտեգրման ազդեցությունը օտարերկրյա ներդրումների հոսքերի վրա:

Ինտեգրացիոն խմբավորումների ձևավորումը գլոբալացման դարաշրջանի ամենագլխավոր դրսևորումն է[1]: Այս պատճառով էլ մասնագիտական գրականության մեջ ինտեգրացիոն խմբավորումների ձևավորմանն ու գործունեությանն ուղղված ուսումնասիրությունները գերակշռում են: Տնտեսագիտական մտքի դասականների (Ա. Սմիթ, Դ. Ռիկարդո, Դ. Միլլ, Կ. Մարքս), ինչպես նաև նոր դասականների (Ս. Հարրիս, Է. Հեքշեր, Բ. Օհլին, Պ. Սամուելսոն, Վ. Լեոնտև, Մ. Պորտեր) կողմից տրված մեկնաբանություններում հաճախ հանդիպում է այն տեսակետը, որ ինտեգրումը առաջ է եկել երկրների միջև աշխատանքի բաժանման արդյունքում[2]: Այդ տեսակետը հիմնավորվում է այն փաստարկով, որ հենց աշխատանքի բաժանման արդյունքում տեղի ունեցած ռեսուրսների կենտրոնացումն է ստիպում երկրներին գնալ համագործակցության և հետագա ինտեգրման:

Ստրուկտուրալիզմի ներկայացուցիչները (Գ. Մյուրդալ, Ա. Մարշալ, Ֆ. Պերու) տնտեսական ինտեգրացիան համարում էին տնտեսության տարբեր ոլորտներում իրականացվող կառուցվածքային փոփոխությունների ամբողջություն: Նրանց կարծիքով, նոր ձևավորվող տնտեսական խմբավորման հաջողության գրավականը համագործակցության ճիշտ ոլորտների հայտնաբերումն է և առաջնահերթ այդ ոլորտներում փոփոխությունների իրականացումը:

1960-ական թվականներին առաջ եկավ նաև կորպորացիոնալիզմի տեսությունը, որի ներկայացուցիչներ Ս. Ռոլֆի և Յու. Ռոստոուի կարծիքով տնտեսական ինտեգրացիան հնարավոր չէ իրականացնել շուկայական մեխանիզմների և կառավարության կողմից իրականացվող քայլերի միջոցով[3], և միայն վերազգային կորպորացիաներն են ի վիճակի ձևավորելու միջազգային կայուն տնտեսական հարաբերություններ, որոնց գործունեությունն էլ ստիպում է երկրներին գնալ ավելի խորը համագործակցության:

Ամփոփելով տարածաշրջանային համագործակցության տեսական ու մեթոդաբանական հիմքերը՝ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ հետազոտողների տեսակետները հատկապես ուղղված են ինտեգրացիոն խմբավորման ստեղծման նախապայմանների ուսումնասիրությանը՝ շեշտադրելով երկու տարբերակներ՝ շուկայական մեխանիզմի և վերազգային կառավարման մարմինների ստեղծման միջոցով համագործակցության խորացում: Սակայն, վերոնշյալ երկու նախապայմաններն առանձին-առանձին չեն կարող տալ ինտեգրացիոն խմբավորման ձևավորման և

---

[1] Տե՛ս, Обуховский В.В., «Теории международной экономической интеграции» // Экономика XXI века: спец. ежемесячник прогнозов, планов, программ, сценариев. 2007. №7, с. 27.

[2] Տե՛ս, Գալոյան Դ., «Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ասպեկտները» // Հեղինակային հրատարակություն, Երևան 2014, էջ 8-20:

[3] Տե՛ս, Gali J., «Monetary Policy, Inflation, and the Business Cycle: An Introduction to the New Keynesian Framework and Its Applications» // Second Edition, Princeton University Press 2015, p. 102.

հետագա գործունեության ցանկալի արդյունքը, ուստի նախընտրելի է դրանց միաժամանակյա առկայությունը:

Միևնույն ժամանակ, ըստ հեղինակի, տարածաշրջանի երկրների միջև ներդրումային համագործակցության ընդլայնումը և խորացումը անհնար է պատկերացնել առանց տարածաշրջանային զարգացման գիտականորեն հիմնավորված ռազմավարության: Այդ պատճառով, հեղինակը տարածաշրջանի երկրների միջև ներդրումային համագործակցության զարգացումը դիտարկում է իբրև դրա կառուցվածքային տարրերի փոխկապակցված համակարգ և առաջ քաշում ներդրումային համագործակցության զարգացման համալիր ռազմավարության երեք հիմնական տարր, ընդ որում, ներդրումների ֆինանսավորումը դիտարկում է իբրև տնտեսական և ներդրումային համագործակցության ընդլայնման հիմք (գծանկար 1):



Գծանկար 1. Տարածաշրջանային ներդրումային համագործակցության մեխանիզմի կառուցվածքային տարրերը

Նախորդ դարի վերջին տասնամյակներից սկսած համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրացիոն խմբավորումների քանակն էապես ավելացավ, սակայն տարածաշրջանային տնտեսական ինտեգրման դասական օրինակ է մնում Եվրամիությունը (ԵՄ): Այդ պատճառով վերջինիս, ինչպես նաև Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրի (NAFTA) փորձի ուսումնասիրության վրա հեղինակը փորձել է բացահայտել տարածաշրջանային համագործակցության ազդեցությունները ներդրումային հոսքերի ակտիվացման վրա: Այսպես, NAFTA-ի ստեղծումից անմիջապես

հետո վերացվեցին գրեթե բոլոր ներդրումային սահմանափակումները համագործակցության անդամ երեք երկրների (ԱՄՆ, Մեքսիկա, Կանադա) միջև, անդամ բոլոր երկրներում հիմնվեցին բազմաթիվ կառույցներ, որոնց գործունեությունն ուղղված էր պետական մակարդակով ներդրումների պաշտպանությանը, ինչպես նաև համատեղ հանձնաժողովների միջոցով առաջացած խնդիրների լուծմանը: NAFTA-ն երաշխավորում է անդամ պետությունների տնտեսությունների որոշ ոլորտներում օտարերկրյա ներդրումների նկատմամբ ոչ խտրական վերաբերմունք: Իհարկե, ներդրումների ազատականացումը սահմանափակվում էր այն ոլորտներում, որոնք կապված չէին երկրների ազգային անվտանգության հետ, ինչպես նաև կան որոշ վերապահումներ՝ կապված Մեքսիկայի էներգետիկ ոլորտում իրականացվող ներդրումների հետ: Չնայած NAFTA-ի ձևավորումը անմիջապես դրական ազդեց երկրների միջև կապիտալ ներդրումների հոսքերի ակտիվացման վրա, սակայն համագործակցության այդ ձևաչափը չհանգեցրեց անդամ պետությունների տնտեսությունների զարգացման աստիճանների համահավասարեցմանը[4]: ՈՒստի, հեղինակի կարծիքով, NAFTA-ի անդամ երկրների միջև համագործակցության ներկայիս ձևաչափը սպառել է իրեն և միայն հարաբերությունների խորացումը կօգնի անդամ բոլոր պետություններին իսկապես քաղել այն դրական արդյունքները, որոնք ակնկալվում էին համագործակցության սկզբում: Այս տեսանկյունից հատկապես կարևորվել է միասնական ներդրումային ֆոնդի ստեղծումը, որի գործունեությունն ուղղված կլինի անդամ երկրների միջև եկամուտների համահավասարեցմանը, հատկապես Մեքսիկայի տնտեսության վիճակի բարելավմանը: Համագործակցության սերտացման մեկ այլ տարբերակ կարող է լինել հյուսիսամերիկյան երկրների միջև ընդհանուր շուկայի ձևավորումը, որն արդեն կապահովի արտադրության գործոնների ազատ տեղաշարժը:

ԵՄ-ն օտարերկրյա ներդրումների ներգրավման համար վարում է առևտրային արգելքների վերացման ինտենսիվ քաղաքականություն: Օտարերկրյա ներդրողների համար հատկապես կարևոր է առանց արգելքների մուտքը տեղական շուկա, ինչը կարող է ներդրողների համար գրավիչ լինել տեղական աշխատուժի բարձր որակավորման և համեմատական էժանության տեսանկյունից, իսկ ներդրումների իրականացման համար հատկապես կարևորվում են նոր տեխնոլոգիաների կիրառումը և տնտեսության զարգացման ինտենսիվ մոդելի ապահովումը: Տնտեսության բացության բարձր աստիճանը ԵՄ անդամ երկրներում այլևս հնարավորություն չի տալիս օտարերկրյա ներդրումների ծավալի մեծացումն ապահովել բիզնես միջավայրի գործոնների բարելավման միջոցով: Այս նկատառումով էլ անհրաժեշտ է ներդրումների ներգրավման այլ մեթոդներ որոնել: Ներկայումս ԵՄ-ը կորցրել է աշխարհում օտարերկրյա ներդրումների ներգրավման առումով առաջատարի դիրքը: Դեռևս 2000 թ. ԵՄ երկրները հանդիսանում էին համաշխարհային ներդրումների 50%-ի ընդունողը, այս ցուցանիշը ներկայումս կազմում է 20% (239 մլրդ եվրո)[5]: Համեմատության համար նշենք, որ BRICS-ի անդամ երկրները 2007 թ. ի վեր իրենց երկրներ հոսող օտարերկրյա

---

[4] Տե՛ս, Lederman, Maloney, and Servén, «Lessons from NAFTA for Latin America and the Caribbean» // The World Bank, 2005, pp. 8-11.

[5] Տե՛ս, Foreign direct investment statistics, http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Foreign_direct_investment_statistics:

ներդրումների ծավալները կրկնապատկել են: ԵՄ իրականացվող ներդրումների մեջ երրորդ երկրներից կատարվող ներդրումների ծավալն աստիճանաբար մեծանում է, սակայն դեռևս ներդրումների 60%-ը բաժին է ընկնում ԵՄ ներքին ներդրումներին: Հեղինակը այս երևույթը որակում է որպես ներդրումների վերաբաշխում, այլ ոչ դրանց ներգրավում:

Օտարերկրյա ներդրումների բաշխվածությունը ԵՄ անդամ երկրներում ևս բավականին անհամաչափ է: Օրինակ, 2013 թ. ներդրումների ներգրավման տեսանկյունից առաջատար դիրքեր էին զբաղեցնում Իսպանիան և Ֆրանսիան, իսկ 2014 թ. Ֆրանսիայում ներդրումների ծավալները նախորդ տարվա համեմատ կրճատվեցին 65,6%-ով, որի արդյունքում Գերմանիան գրավեց ավելի առաջատար դիրք: Միևնույն ժամանակ, ընդհանուր առմամբ, ակնհայտ է ներդրումների հոսքերի կտրուկ նվազում Իտալիայում և Հունաստանում, որը պայմանավորված է այդ երկրներում անընդհատ աճող պետական պարտքի հետ[6]:

Այսպիսով, ԵՄ անդամ երկրների կողմից ներգրավված ներդրումների ուսումնասիրությունը հեղինակին թույլ են տվել եզրակացնել, որ այստեղ ներդրումային գործընթացներում տեղ գտած միտումները տարբերվում են մինչ անդամակցությունը և անդամակցությունից հետո: 2004 թ. և 2007 թ. ԵՄ ընդլայնման մաս կազմող երկրներում իրականացված ներդրումները կտրուկ ավելացել են: Չեխիայում, Հունգարիայում, Լատվիայում, Լիտվայում, Սլովենաիայում և Բուլղարիայում իրականացված ներդրումները 2004 թ.՝ ԵՄ անդամակցությունից հետո ավելի քան 2 անգամ գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշները: Ներդրումների աճի միտումը պահպանվել է բոլոր երկրներում մինչև 2008 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որից հետո, սկսած 2011-2014 թթ., ներդրումների հոսքերը համամասնորեն նվազել են: 2014 թ., չնայած ներդրումային դիրքերի որոշակի թուլացմանը՝ Եվրամիությունը շարունակում է մնալ ներդրումների ներգրավման համաշխարհային առաջատարներից մեկը՝ զարգացող երկրների տնտեսական առաջընթացը դիտարկելով որպես նոր ներդրումների ներգրավման շարժառիթ: Մասնավորապես, ակնհայտ է Չինաստանի կողմից եվրոպական ընկերություններում ներդրումների ինտենսիվացումը և ընկերությունների վերահսկող փաթեթների ձեռքբերումը:

Այսպիսով, ինտեգրման ազդեցությունը տարբեր է համագործակցության տարբեր ձևեր ունեցող միությունների համար: Տարածաշրջանային համագործակցության արդյունքում ավելի փոքր ազդեցություն ունեն այն երկրները, որոնք ՕՈւՆ-երի համաշխարհային շուկայում արտահանման առաջատարներն են, իսկ ավելի մեծ ազդեցություն ունեն այն երկրները, որտեղ մեծ են ներգրավված ՕՈՒՆ-երի ծավալները: Իհարկե կախված համագործակցող երկրների զարգացման աստիճանից այդ ազդեցությունների մակարդակը կարող է տարբեր լինել:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Եվրասիական տնտեսական համագործակցության ներդրումային քաղաքականության առանձնահատկությունները»*** գլխում, բացահայտվել են ԵԱՏՄ՝ որպես զարգացող տարածաշրջանի ինտեգրման առանձնահատկությունները, այդ երկրների ներդրումային հնարավորությունները, գնահատվել են անդամ երկրների ներդրումային քաղաքականության առկա հիմնախնդիրները:

---

[6] Տե՛ս, European Commission, European Statistics, www.eurostat.eu վիճակագրական կայք:

ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով կարևորվում է փոխադարձ ներդրումային հոսքերի ակտիվացումը[7]: Հատուկ ուշադրություն է դարձվում համաշխարհային շուկայում մրցունակ արտադրանքի առաջարկի ներկայացմանը, քանի որ միայն առևտրային հարաբերությունների սերտացումը չի կարող նպաստել տնտեսական վիճակի բարելավմանը և համաշխարհային շուկայում ազգային տնտեսությունների դերի բարձրացմանը: ԱՊՀ տարածքում ներդրումների հոսքերի ուղղությունների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ համախառն ներդրումների գերակշիռ մասը հոսում է դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ: Այսպես, 2014թ. ԱՊՀ տարածաշրջանում իրականացված ներդրումների 77,6%-ը ուղղվել է ԵԱՏՄ անդամ երկրներ (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ԵԱՏՄ անդամ երկրների ներդրումների ներգրավման դինամիկան 2000-2014թթ. (մլն ԱՄՆ դոլար) [8]

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ ներդրումներին, ապա դրանք գտնվում են բավականին ցածր մակարդակի վրա:

Չնայած 2008թ. ԵԱՏՄ երկրների փոխադարձ ներդրումային հոսքերի կտրուկ նվազմանը՝ հաջորդող տարիներին դրանք ակտիվացել են՝ 2012թ. հասնելով մինչև 27 մլրդ դոլարի: Այնուամենայնիվ, 2013 թ. ԵԱՏՄ երկրների փոխադարձ հոսքերը կրճատվել են 44%-ով՝ կազմելով ընդամենը 15.1 մլրդ դոլար: Ավելի անմխիթար վիճակ ձևավորվեց 2014 թ., երբ Ռուսաստանում ռուբլու արժեզրկման հետ կապված իրավիճակը նվազեցրել է ներդրումների փոխադարձ հոսքերը 85.4%-ով՝ հասցնելով դրանք 2.2 մլրդ դոլարի (աղյուսակ 1):

---

[7] Տե՛ս, Ананьев М.А., Бессонова Е.В., Вебер Ш., Бутурлина О.С., Волчкова Н.А., «Единая торговая политика и решение модернизационных задач» (монография в соавторстве), // Санкт-Петербург: Центр интеграционных исследований Евразийского банка развития, 2012. – 238 с.

[8] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից Inward and outward foreign direct investment flows, annual, 1970-2013, տվյալների բազայի հիման վրա, http://unctadstat.unctad.org/.

Աղյուսակ 1

ԵԱՏՄ տարածքում իրականացվող ներդրումները միության անդամ երկրների կողմից 2008-2014 թթ. (մլրդ ԱՄՆ դոլար) [9]

	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Հայաստան	0.1	0.3	0.2	0.2	0.4	0.2	0.4
Բելառուս	2.3	1.7	2.1	3.4	3.0	1.6	0.4
Ղազախստան	1.3	0.8	1.5	2.4	3.0	3.9	-
Ռուսաստան	11.6	14.1	14.3	20.4	20.6	9.4	1.0
Ընդամենը	15.3	16.9	18.1	26.4	27	15.1	2.2

Միության անդամ երկրների միջև ներդրումային հոսքերի գնահատման համար հեղինակն ուսումնասիրել է նաև առանձին երկրներում իրականացվող ներդրումներին առնչվող ցուցանիշները, որոնց վերլուծությունը ցույց է տվել, որ ԵԱՏՄ անդամ երկրների կապիտալի շուկաները բավարար ինտեգրված չեն և երկրները աչքի չեն ընկնում կապիտալ ներդրումների կանոնակարգված հոսքերով: Միայն Ռուսաստանի հետ ԵԱՏՄ մյուս երկրների ներդրումային համագործակցությունն է դրսևորում որոշակի կայունություն, իսկ մյուս երկրների փոխադարձ ներդրումային կապերը բավականին թույլ են:

Ընդհանրապես, եթե մինչև տնտեսական միության ձևավորումը երկրների միջև ներդրումային հոսքերը ակտիվ են, ապա այդ շարժը նույնիսկ մաքսային միության պայմանագրի կնքման դեպքում, ավելի է ինտենսիվանում: Միևնույն ժամանակ, ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների տնտեսական առաջընթացի և ներդրումների խթանման վրա ինտեգրացիան թողնում է դրական ազդեցություն, այն դեպքում, երբ վերանում են նաև մինչև ինտեգրվելն առկա փոխադարձ մաքսատուրքերը: Այդ առումով, նպատակահարմար ենք գտնում մաթեմատիկական մոդելի կիրառմամբ գնահատել ՀՀ-ԵԱՏՄ արտաքին առևտրի և ներդրումային համագործակցության միջև առկա կախվածությունը: Սակայն փոփոխականների ուղիղ գծային կախվածությունը դիտարկելիս, սխալները աչքի են ընկնում ավտոկոռելացիոն կապի առկայությամբ: Ուստի, մոդելը բարելավելու համար մեր կողմից ներմուծվել են լագային փոփոխականներ. մասնավորապես դիտարկվել է ՀՀ-ԵԱՏՄ արտաքին առևտրի ծավալների կախվածությունը 1 տարի առաջվա (1 լագ) ներդրումների ծավալներից: Դիտարկվող մոդելն է՝

$$FDI = C(1)*TRADE + C(2)$$

Ինչպես կարելի է ենթադրել բերված վիճակագրական հայտանիշներից, մոդելը բավականին հաջողված է: Դրա մասին է վկայում համապատասխան գործակիցների վիճակագրությունը: R^2-ին՝ դետերմինացիայի գործակիցը, հավասար է 0.54, այսինքն գնահատված մոդելով է բացատրվում ցուցանիշների կախվածության 54%-ը: Բարձր է նաև ընդհանուր մոդելի նշանակալիության աստիճանը՝ F վիճակագրությունը (F>35):

[9] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ «Макроэкономические показатели, определяющие степень интеграции государств – членов Евразийского экономического союза» 2008-2012, 2012-2014 гг., Государства-члены таможенного союза и единого экономического пространства 2005–2012 // Краткий статистический сборник վիճակագրական տեղեկագրերի հիման վրա:

Հարկ է նշել, որ գնահատված մոդելում բավարարված է նաև Durbin-Watson ցուցանիշը՝ 1.8, ինչը վկայում է, որ մոդելը բացատրող փոփոխականների միջև ավտոկոռելացիա չկա (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Գծային մաթեմատիկական հետազոտության արդյունքներ

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
TRADE	0.223008	0.118710	1.878605	0.0870
C	17.70641	106.8452	0.165720	0.8714

R-squared	0.542902	Mean dependent var	190.4385
Adjusted R-squared	0.174075	S.D. dependent var	215.9074
S.E. of regression	196.2176	Akaike info criterion	13.53696
Sum squared resid	423514.7	Schwarz criterion	13.62388
Log likelihood	-85.99026	Hannan-Quinn criter.	13.51910
F-statistic	3529157	Durbin-Watson stat	1.863533
Prob(F-statistic)	0.087041		

Ստուգվել են նաև գծային մոդելի բնութագրիչները, որոնք ցույց են տալիս մոդելի սխալների հատկությունները: Ըստ այդմ, մոդելի սխալների դիսպերսիան հաստատուն է, քանի որ դրանց միջև հետերոսկեդաստիկությունն և ավտոկոռելացիան բացակայում են:

Մոդելի գծապատկերից երևում է նաև, որ մեր կողմից կատարված կանխատեսումները և իրական վիճակը միմյանցից խիստ շեղված չեն (գծապատկեր 2): Ելնելով ստացված տվյալներից կարելի է ենթադրել, որ ներդրումների փոփոխությունը 1 տոկոսային կետով բերում է արտաքին առևտրի 0.49 տոկոսային կետի փոփոխության: Այսինքն, ՀՀ-ԵԱՏՄ արտաքին առևտուրը բավականին զգայուն է այդ երկրներից ներհոսած կապիտալ ներդրումների նկատմամբ:



Գծապատկեր 2. Մոդելի ներկայացումը գրաֆիկական գծապատկերի տեսքով

Չթերագնահատելով ԵԱՏՄ երկրների փոխադարձ ներդրումների անհրաժեշտությունը, այնուամենայնիվ ելնելով ԵՄ փորձից, գտնում ենք, որ կարևոր է նաև երրորդ երկրներից ներդրումների ներգրավման հնարավորությունների և ուղիների հայտնաբերումը: Այս քաղաքականությունն օգնեց ԵՄ տարածքում գործող ՎԱԿ-երին

երրորդ երկրներից ներդրումներ ներգրավելու միջոցով ընդլայնել սեփական ներդրումները ինտեգրացիոն խմբավորման սահմանների ներսում[10]: ԵԱՏՄ տարածաշրջանում դեռևս ներդրումների հոսքերի այդպիսի ակտիվություն չի նկատվում:

Հեղինակի կարծիքով, ԵԱՏՄ տարածաշրջանում միասնական ներդրումային քաղաքականության իրականցման համար պետք է՝

- որոշակիացնել ներդրումային համագործակցության և դրանում յուրաքանչյուր անդամ երկրի մասնակցության գերակա ոլորտները,
- համատեղել ներդրումային գործունեության ջանքերն ու գործողությունները, սահմանել երկկողմ ու բազմակողմ կարևորագույն նախագծերի իրականացման գերակայությունները,
- հստակեցնել փոխադարձ ներդրումային նախագծերի իրականացման գործնականությունը՝ հաշվի առնելով համապատասխան խթանների ձևավորումը և այդ ոլորտում առկա խոչընդոտների վերացումը,
- ընդլայնել համատեղ ձեռնարկությունների, ընկերությունների ձևավորման հնարավորությունները, զարգացնել համագործակցությունը արդյունաբերություն, գիտատեխնոլոգիական համագործակցության ոլորտում՝ կոոպերացման սկզբունքներին համապատասխան,
- ակտիվացնել փոքր և միջին ձեռնարկությունների մասնակցությունը իրականացվող խոշորամասշտաբ ներդրումային ծրագրերին,
- ապահովել երրորդ երկրների հետ ներդրումային նախագծերի իրականացում,
- ձևավորել ներդրումային համագործակցության այլ ինստիտուցիոնալ նախադրյալներ:

Ատենախոսության երրորդ՝ «***ՀՀ-հարևան երկրներ ներդրումային համագործակցության հիմնախնդիրները և հեռանկարները»*** գլուխը, նվիրված է Հայաստան-Իրան, Հայաստան-Վրաստան ներդրումային հարաբերությունների դինամիկայի, իրավական բազայի վերլուծությանը, ինչպես նաև այդ ու ԵԱՏՄ անդամ երկրների հետ ներդրումների հոսքերի վրա առավելագույն ազդեցություն ունեցող ոլորտների բացահայտմանը:

Հայաստանի և ԻԻՀ միջև հարաբերությունների զարգացման և տնտեսական կապերի սերտացման նպատակով, հեղինակը անհրաժեշտ է համարում համագործակցության խորացումը էներգետիկայի ոլորտում: Հայաստանը ունի բավարար գիտական ներուժ այդ ոլորտում ներդրումների իրականացման և տնտեսական շահի մեծացման համար: Սա թույլ կտա պահել երկրի էներգետիկ անվտանգությունը, միաժամանակ զերծ մնալով տնտեսական ցնցումներից:

ԻԻՀ տարածքով ՀՀ-ն կարող է նաև նոր երկաթուղու միջոցով մուտք գործել Միջին Արևելքի և Ասիայի մի շարք երկրներ, ինչը մեծապես կնպաստի արևելյան պետությունների հետ տնտեսական կապերի բարելավմանը: Երկաթուղու առկայությունը էապես կնվազեցնի արտահանվող ապրանքների ինքնարժեքը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ՀՀ տնտեսական զարգացման համար կարևորվող

[10] Տե՛ս, Eurostat International Trade and Foreign Direct investment. Luxemburg: Publications Office of the European Union, 2013. http://ec.europa.eu/eurostat/documents/3930297/5969114/KS-FO-12-001-EN.PDF, p. 64-66.

արտահանման ծավալների աճին: Այս նախաձեռնության կենսագործումը բազմապատկչի էֆեկտ կունենա ներդրումների մեծացման առումով:

Ներդրումային հզոր մեկ այլ՝ «Հյուսիս-Հարավ» ավտոմոբիլային միջանցքի նախագծի իրականացումը Հայաստանը կդարձնի տարանցիկ տնտեսական միջանցք Իրանից դեպի Սև ծովի նավահանգիստներ, ինչպես նաև հակառակ ուղղություններով ապրանքային հոսքերի համար:

Վերջին տարիներին Իրանում առկա են լուրջ խնդիրներ հատկապես տնտեսության առաջատար ոլորտներից մեկում՝ նավթամշակման ոլորտում: Այս ոլորտում, կապված զարգացած երկրների կողմից կիրառվող սահմանափակումների հետ, օտարերկրյա ներդրումները բացակայում են: Այժմյան ռեսուրսներով և հնարավորություններով նավթամշակման արդյունաբերության զարգացումը այլևս արդյունավետ չէ, քանի որ կիրառվող տեխնոլոգիաները իրենց վաղուց սպառել են:

Ուստի հեղինակը նավթավերամշակման ոլորտում Հայաստան-Իրան համագործակցությունը համարում է արդիական խնդիր: Այս ոլորտում համատեղ ձեռնարկության ձևավորման համար բարենպաստ գործոններ են երկու երկրների աշխարհագրական դիրքը, զարգացած աշխարհի հետ ՀՀ հարաբերականորեն բարենպաստ հարաբերությունների առկայությունը, տնտեսության զարգացման գործում նորարարական քաղաքականության կենսագործումը: Նոր տեխնոլոգիաների կիրառումը նավթավերամշակման ոլորտում կարող է և՛ Հայաստանի, և՛ Իրանի համար տնտեսական զարգացման հզոր խթան հանդիսանալ: Որպես ներդրումների աղբյուր կարող են օգտագործվել Եվրասիական տնտեսական միության շրջանակում ստեղծված ներդրումային հիմնադրամների միջոցները, հետագայում համապատասխան շահաբաժինների փոխանցման, կամ պատրաստի արտադրանքի միջոցով փոխհատուցման պայմանով:

Նման նախաձեռնությունը կյանքի կոչելու համար հեղինակը անհրաժեշտ է համարում՝

- ձևավորել համապատասխան իրավական մեխանիզմներ՝ ներդրումային ռիսկերը նվազագույնի հասցնելու և փոխադարձ ներդրումները պաշտպանելու համար,
- համաձայնեցնել փոխադարձ գործողությունները ներդրումների խթանման և դրանց իրացման արդյունավետության բարձրացման և վերահսկողության մեխանիզմների սահմանման առումով,
- խրախուսել ոլորտում կատարվող ներդրումային ծրագրերում փոքր ու միջին ձեռնարկությունների և օտարերկրյա ընկերությունների մասնակցությունը՝ վերջիններիս միջոցով նոր տեխնոլոգիաների և նոու-հաուների փոխանցման գործընթացը խթանելու նկատառումներով,
- օտարերկրյա ներդրողների մասնակցությունը նավթավերամշակման արդյունաբերության զարգացումը խթանելու համար սահմանել հարկային և ֆինանսական զեղչեր՝ հարկերից լրիվ կամ մասնակի ազատման, արտոնյալ հարկային դրույքների, հարկային զեղչերի, արագացված ամորտիզացիայի հարկային զեղչերի, մաքսատուրքերի վերադարձման կամ դրանցից ազատման ձևերով:

Ինչ վերաբերում է ՀՀ-ՎՀ ներդրումային համագործակցությանը, ապա հեղինակի կողմից կատարված վերլուծությունները փաստում են, որ երկու երկրներում ձևավորված է փոխադարձ ներդրումների ներգրավման և պաշտպանության համեմատաբար բարենպաստ միջավայր, որը նաև առավել բարենպաստության ռեժիմի շրջանակներում

տարածվում է ներդրումային գործընկեր մնացած երկրների վրա: Ուստի, այդ համատեքստում ուսումնասիրվել է ՀՀ և ՎՀ օտարերկրյա կապիտալի ներմուծման և արտահանման բաժնեմասերի դինամիկան՝ կապիտալի համաշխարհային շուկայում այդ երկրների մասնակցության մակարդակը բացահայտելու նկատառումներով: Այսպես, 2006-2014 թթ. Վրաստանի կապիտալի ներմուծման բաժնեմասի կորը միանշանակ վարքագիծ չի դրսևորել: Եթե 2006 թ. կապիտալի ներմուծման բաժնեմասը կազմում էր 15,1%, որը մինչև 2008 թ. հասել էր 17,2%-ի, ապա հետագայում գրանցվել է այդ ցուցանիշի կտրուկ անկում մինչև 6,1% մակարդակը՝ 2009 թ. (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ՀՀ և ՎՀ կապիտալի ներմուծման ու արտահանման բաժնեմասերը 2006-2014 թթ. (%)[11]

Հաջորդ երկու տարիներին ցուցանիշը աննշան բարելավվել է (7,3%՝ 2011 թ.), իսկ ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջում այն հասել է 7,7%-ի: Այդ նույն ժամանակահատվածում ՀՀ կապիտալի արտահանման բաժնեմասի ցուցանիշը ամենաբարձր մակարդակն ունեցել է 2006 թ.՝ 7,3%, որը ամենաբարենպաստ տնտեսական կոնյուկտուրայի պայմաններում, նույնիսկ պակաս է Վրաստանի 2014 թ. ցուցանիշից: Ներկայում, ՀՀ կապիտալի ներմուծման բաժնեմասի ցուցանիշը Վրաստանի համապատասխան ցուցանիշի կեսից պակաս է:

Կապիտալի արտահանման ներուժը երկու երկրներում էլ ցածր է: Սակայն, եթե ճգնաժամի առաջին տարում՝ 2009 թ. ՀՀ-ից գրանցվել է կապիտալի արտահոսք, ապա ՎՀ-ում տեղի է ունեցել հակառակ գործընթաց: Բացի դրանից, եթե կապիտալի ներմուծման բաժնեմասի ցուցանիշը ՀՀ-ում ՎՀ-ից պակաս էր 2 անգամ, ապա արտահանման բաժնեմասի ցուցանիշը՝ 6 անգամ փոքր է:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում երկու երկրներն էլ կորցրել են ոչ միայն իրենց ներդրումային գրավչությունը, այլև չեն տնօրինում բավարար ներդրումային ներուժի կապիտալի արտաքին շուկաներին

[11] Հաշվարկները կատարվել են և գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից United Nations Conference on Trade and Development, http://unctadstat.unctad.org/ կայքի տվյալների հիման վրա:

արդյունավետ ներգրավվելու համար: Ուստի, ըստ հեղինակի, նախնական փուլում առկա կապիտալային ռեսուրսների մոբիլիզացիան և երկու երկրների համար փոխշահավետ ներդրումային ծրագրերի իրականացումը, հենվելով արտադրության զարգացման համեմատական առավելությունների վրա, կարող է գրավիչ լինել օտարերկրյա ներդրողների համար: Կապիտալի ներգրավման բաժնեմասի ավելացումը տնտեսության զարգացմանը զուգընթաց կխթանի նաև կապիտալի արտահանումը:

Վերլուծելով ՀՀ հարևան երկրների, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների հետ տարածաշրջանային ներդրումային համագործակցության հնարավորությունները և ներուժը, հեղինակը ներկայացրել է էմպիրիկ հետազոտություն, որը թույլ է տվել գնահատել ՀՀ և վերոնշյալ երկրների ներդրումային համագործակցության հնարավորությունները և մշակել առաջարկություններ դրանց խորացման ուղղությամբ: Այդ նպատակով վերլուծվել է քննարկվող երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կապը ՕՈՒՆ-երի հետ՝ ներդրումների խթանման վրա ազդող հիմնական տնտեսական ոլորտների բացահայտման համար:

Այսպես, հետազոտության համար իրականացվել են հետևյալ գործողությունները և ուսումնասիրությունները.

1. *Երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ուսումնասիրություն:* Հետազոտվել են ՀՀ, ՀՀ հարևան և ԵԱՏՄ անդամ երկրների մակրոտնտեսական ցուցանիշները: Հետազոտության առաջին հատվածում բոլոր երկրների ցուցանիշները համեմատվել են ՌԴ համապատասխան ցուցիչների հետ, քանի որ տնտեսական և ներդրումային համագործակցության տեսանկյունից Ռուսաստանը հանդիսանում է տարածաշրջանի ամենահզոր երկիրը և ՀՀ հիմնական առևտրային ու ներդրումային գործընկերը:
2. *Էմպիրիկ հետազոտություն*, որն ուղղված է դիտարկվող երկրներում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների կախվածության գնահատմանը:

Հետազոտության համար օգտագործվել է հետևյալ էմպիրիկ մոդելը՝

$$\mathbf{FD\ (FDIij) = \alpha_0 + \alpha_1 SD\ (Eij) + \alpha_2\ SD\ (IPij) + \alpha_3\ SD\ (CPIij) + \alpha_4\ SD\ (Mij) + \alpha_5\ SD\ (Yij) + \alpha_6\ FD\ (GDPij) + \xi ij}$$

$$\mathbf{FD\ (FDIij) = 0.586 + 3.5\ SD\ (IPij) + 1.28\ SD\ (CPIij) + 1.9\ SD\ (Mij) - 3.3\ SD\ (Yij) - 0.47\ FD\ (GDPij) + \xi ij}$$ [12]

Հետազոտված փվյալների նկարագրությունը: Համեմատական վերլուծության համար իրականացվել է տարածաշրջանային համագործակցությանը նպաստող այնպիսի ցուցանիշների ուսումնասիրություն, ինչպիսիք են՝ ՕՈՒՆ-ների ներհոսքը, արտարժույթի փոխարժեքի կայունությունը, արդյունաբերական արտադրության ծավալը, գնաճի կայունությունը, արժութային ցնցումները, իրական ցնցումները և ՀՆԱ մոնետարիզացիան: Տատանումները և միջին ցուցանիշները հաշվարկելու համար օգտագործվել են էմպիրիկ հետազոտությունների համար առաջարկվող բանաձևերը:

[12] Մոդելը կառուցվել է հեղինակի կողմից, որի համար մեթոդաբանական հիմք են ծառայել Робышевский С.М., Полевой Д.И., «Проблемы создания единой валютной зоны в странах СНГ» (с. 88-93) և Н. Н. Котляров, П. В. Алексеев, «Оценка перспектив евразийской валютно-экономической интеграции» (с. 25-27) աշխատությունները:

Ուսումնասիրությունը կատարվել է 2006-2014 թթ. մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա: Իրականացվել է էմպիրիկ միջճյուղային հետազոտություն, որի ընթացքում հաշվարկվել և օգտագործվել են 7 ցուցիչներ՝ 36 դիտարկումներով:

Արդյունքներ: Տվյալների վերլուծության և համապատասխան ցուցիչների հաշվարկման արդյունքում ստացել են հետևյալ արդյունքները (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Հաշվարկված ցուցիչների ամփոփագիր

	ՕՈՒՆ կշիռ	Արտարժույթի փոխարժեքի կայունություն	Արդյունաբեր. արտադրության ծավալ	Ինֆլյացիոն կայունություն	Արժութային ցնցումներ	Իրական ցնցումներ	ՀՆԱ մոնետարիզացիա
Հայաստան				V	V		
Ադրբեջան	V						
Բելառուս					V		
Վրաստան	V			V			
Իրան					V		V
Ղազախստան	V	V	V	V			V
Ղրղզստան	V		V				
Թուրքիա	V			V			V

Օտարերկրյա ուղղակի ներդրումների կշիռը: Այս ցուցանիշի բարձր արժեքը ցույց է տալիս, որ երկիրն օտարերկրյա ուղղակի ներդրումների համար ապահովում է բավականին լավ միջավայր: Որպես հաշվարկային արժեք վերցվել է միջինը, որը կազմում է 0.733:

Արտարժույթի փոխարժեքի կայունություն: Այս ցուցանիշի բարձր արժեքը նշանակում է, որ երկիրը կարող է ունենալ բարձր ծախսեր: Որպես հաշվարկային արժեք վերցվել է միջինի մեկ երկրորդը, որը ռուսական ռուբլու հանդեպ տատանման ցուցանիշն է և կազմում է 0.049: Այս ցուցանիշով ամենամեծ տատանումն ունի Բելառուսը, իսկ պայմանին համապատասխանում է Ղազախստանի ցուցանիշը:

Արդյունաբերական արտադրության ծավալ: Այս ցուցիչի բարձր արժեքը ներկայացնում է իրական ցնցումների ահռելի անհամաչափությունը: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ միջին ցուցանիշի մեկ երկրորդը կազմում է 0.025: Ելնելով ստացված արդյունքներից՝ միայն Ղազախստանն ու Ղրղզստանը ունեն տատանման ցածր արժեքներ: Այս ցուցանիշի ամենամեծ արժեքն ունի Իրանը:

Ինֆլյացիոն (գնաճի) կայունություն: Գնաճի մակարդակի տարբերությունները և տատանումները բերում են արտարժույթի փոխարժեքի տատանումների: Դիտարկվող երկրներում տատանումները բնութագրելու համար այս ցուցիչի նվազագույն արժեքը վերցվել է միջինի մեկ երկրորդը: Այսպես, սահմանային արժեքը 0.022 է: Այս խմբի մեջ մտնում են Հայաստանը, Վրաստանը, Ղազախստանը և Թուրքիան:

Արժութային (դրամական) ցնցումներ: Դիտարկվող երկրներում դրամավարկային քաղաքականության տարբերությունները բնութագրում են գնաճի տարբեր մակարդակներով, որն էլ տանում է գնողունակության տարբերությունների: Այսպես ցուցիչի նվազագույն արժեքը վերցվել է միջինի մեկ երկրորդը, այս դեպքում սահմանային արժեքը 0.013 է: Այս խմբի մեջ մտնում են Հայաստանը, Բելառուսը և Իրանը:

Իրական ցնցումներ: Հարաբերակցության գործակցի բարձր արժեքները երկու երկրների միջև արտացոլում են ան փաստը, որ այդ տնտեսություններում տեղի են ունենում սիմետրիկ ցնցումներ: Այս պարագայում միջին ցուցնիշի մեկ երկրորդը կազմում է 0.023: Այս ցուցանիշին դիտարկվող երկրները չեն համապատասխանում:

ՀՆԱ մոնետարիզացիա: Այս ցուցանիշի միջին արժեքը կազմում է 0.411 և, համապատասխանաբար, ամենաբարձր արժեքներ ընդունում են Թուրքիան, Իրանը և Ղազախստանը:

Ամփոփելով ստացված արդյունքերը՝ կարող ենք եզրակացնել, որ դիտարկվող երկրները մասամբ համապատասխանում են տարածաշրջանային համագործակցության համար անհրաժեշտ ցուցանիշներին, իսկ Ղազախստանը և Թուրքիան համապատասխանում են դիտարկվող ցուցանիշների մեծ մասին:

Հետազոտության երկրորդ հատվածում հեղինակը իրականացրել է էմպիրիկ միջճյուղային հետազոտություն, որտեղ համեմատվել են դիտարկվող ցուցանիշները բոլոր երկրներում՝ զույգ առ զույգ:

Դիտարկվել են 7 ցուցիչներ, որոնցից 1-ը անկախ փոփոխականն է՝ ՕՈՒՆ-ի կշիռը, իսկ մյուս 6-ը համարվում են կախյալ փոփոխականներ, որոնք էական և ոչ էական դրական կամ բացասական ազդեցություն են ունենում անկախ փոփոխականի վրա:

Արդյունքները ցույց են տալիս, որ արդյունաբերական արտադրության ծավալի, ինֆլացիոն կայունության, արժութային ցնցումների տեսանկյունից կապը ՕՈՒՆ-երի հետ դրական է: Սա բավարարում է հեղինակի կողմից կատարված տեսական ենթադրությանը (հիպոթեզին): Մյուս փոփոխականները, ինչպիսիք են՝ իրական ցնցումները և ՀՆԱ մոնետարիզացիան բացասական են ազդում ՕՈՒՆ-ի ներհոսքի ծավալի վրա, քանի որ այս ցուցանիշների մեկ միավորով աճը բերում է ՕՈՒՆ-ի ներգրավման ծավալների համապատասխանաբար՝ -3,31 և -0,47 միավոր նվազման (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Էմպիրիկ միջճյուղային հետազոտության արդյունքներ

Կախյալ փոփոխական - ՕՈՒՆ	
Արդյունաբերական արտադրության ծավալ	**3.51****
	1.66
Ինֆլյացիոն կայունություն	**1.28**
	1.47
Արժութային ցնցումներ	**1.93**
	2.89
Իրական ցնցումներ	**-3.31****
	1.478
ՀՆԱ մոնետարիզացիա	**-0.471**
	0.64
Կոնստանտ	**0.586**
	0.362
R^2	**0.2408**
Դիտարկումներ	**36**
***** p<0.01 ** p<0.05, * p<0.1**	**-**

Փաստորեն, գրեթե բոլոր ցուցանիշները վիճակագրորեն բավականին բարձր են, բացառությամբ ՀՆԱ մոնետարիզացիայի ցուցիչի. սա հուշում է որ վերջինս այդքան էլ լավ չի բնութագրում ներկայացվող մոդելը, սակայն չի կարելի պնդել թե վերջինս, ելնելով իր ազդեցությունից, մերժում է տեսական հիպոթեզը (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. Մոդելի ներկայացումը գրաֆիկական գծապատկերների տեսքով

Ստուգվել են նաև մոդելի բնութագրիչները, որոնք ցույց են տալիս մոդելի սխալների հատկությունները: Այսպես, մոդելի սխալների դիսպերսիան հաստատուն է, քանի որ դրանց միջև ավտոկոռելացիան բացակայում է:

Էմպիրիկ արդյունքները ցույց են տալիս, որ արդյունաբերական արտադրության ծավալը ունի էական դրական ազդեցություն ՕՈՒՆ-ի ներգրավման ծավալների վրա՝ 1 միավոր աճը հանգեցնում է ՕՈՒՆ-ի ծավալի աճին՝ 3,5 միավորով:

Դիտարկվող երկրների տնտեսությունների կառուցվածքային, ինտեգրման մակարդակների և իրավական համակարգի տարբերությունները իրենց ազդեցությունն են ունենում, տնտեսական ցնցումներին երկրների դիմակայելու ունակության և մշակվող քաղաքականությունների վրա: Այսպիսով, միության ներսում շատ կարևոր է ընթացակարգերի և այնպիսի ենթակառուցվածքների առկայությունը, որոնք կմիօրինականացնեն տարբեր ցնցումների ազդեցությունները երկրների վրա:

Ներկայումս հետխորհրդային տարածքում, ինչպես նաև տարածաշրջանում ինտեգրացիոն համագործակցությանն ուղղված քայլերը անընդհատ բնույթ են կրում: Ուստի, տարածաշրջանային տնտեսական համագործակցության հիմնական առաջնահերթությունները պետք է լինեն՝ անդամ երկրների կայուն սոցիալ տնտեսական զարգացման ապահովումը, որը պետք է հիմնված լինի նորարական մոդելի վրա, խորը տնտեսական և դրամավարկային քաղաքականության ստեղծման շնորհիվ:

Տարածաշրջանային տնտեսական համագործակցության շրջանակներում օտարերկրյա ներդրումների ներգրավման վերաբերյալ գիտական և մասնագիտական գրականության, Եվրամիության և Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրի երկրների ներդրումային համագործակցության արդի մարտահրավերների, ՀՀ, հարևան և ԵԱՏՄ անդամ երկրների ներդրումային հիմնախնդիրների գնահատման արդյունքում հեղինակի կողմից արվել են հետևյալ ***եզրակացությունները.***

1. Ինտեգրացիոն խմբավորումների և երրորդ երկրների միջև ներդրումային հոսքերի ակտիվացմանը էապես նպաստում են միջազգայնացման և

սակագների շրջանցման (tariff-jumping) մոդելները: Օտարերկրյա ներդրումների ներհոսքը դեպի ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրներ ավելանում է, քանի որ խմբավորման ձևավորման հետևանքով առաջին հերթին մեծանում են ներդրումների պաշտպանությանն ուղղված միջոցները, ինչպես նաև օտարերկրյա ներդրողները հակված են լինում արագ մուտք գործել խմբավորման շուկաներ, որպեսզի խուսափեն հետագա հնարավոր սահմանափակումներից: Այս տեսանկյունից իհարկե հատկապես գրավիչ է ներքին սպառողական շուկայի զգալի ընդլայնումը:

2. Տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորման ձևավորումը, որպես կանոն, նպաստում է ներդրումների ներհոսքի կտրուկ մեծացմանը, սակայն դրանք հավասարաչափ չեն բաշխվում անդամ երկրների միջև: Ներդրումները հոսում են համեմատաբար բարենպաստ բիզնես միջավայր ունեցող երկրներ, իսկ ինտեգրացիոն խմբավորման որոշ անդամներ դուրս են մնում ներդրումների հետաքրքրությունից:
3. Եվրասիական տարածքում նոր միության ձևավորման համար կարևորվում է բիզնես միջավայրի բարելավումը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ցանկացած տնտեսական միություն ենթադրում է անդամ երկրների միջև առևտրային գործունեության ինտենսիվացում և մրցունակության ապահովում: Ինչպես նաև կարևոր է մինչ համագործակցությունը միջկառավարական և միջխորհրդարանական մարմինների և հանձնաժողովների ստեղծումը, որոնք կզբաղվեն ինտեգրման հարցերի կարգավորմամբ:
4. Միջազգային և Եվրասիական զարգացման բանկերի գործունեության հիմնական ուղղությունը ոչ միայն պետք է լինի ներդրումային ծրագրերի հովանավորումը, այլև անդամ երկրներում ֆինանսական և բանկային հատվածի զարգացումը, որը հնարավորություն կտա նաև մեծացնել անդամ երկրների ազգային տնտեսությունների ներդրումային գրավչությունը երրորդ երկրների համար:
5. ԵԱՏՄ անդամների միջև ներդրումային գործունեության ինտենսիվացմանը զուգահեռ նաև պետք է քայլեր ձեռնարկվեն միջազգային հաշվարկների իրականացումը ազգային արժույթով սպասարկելու համար, որը տնտեսական համագործակցության ծավալների մեծացման պարագայում մեծապես կխթանի տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը: Ազգային արժույթով միջազգային հաշվարկների իրականացումը հնարավորություն կտա միության անդամ բոլոր երկրներին խուսափել այնպիսի կորուստներից, որոնք կապված են արժութային փոխարժեքի տատանումների, տրանսակցիոն ծախսերի հետ:
6. ՀՀ ներդրումների որակական կողմի բարելավմանը կարող են նպաստել երրորդ երկրներից իրականացվող ներդրումները: Հատկապես կարևորելով զարգացած տեխնոլոգիական համակարգ ունեցող կազմակերպությունների կողմից իրակա-նացվող ներդրումները՝ այս ուղղությամբ արդեն ձևավորված վերազգային ներդ-րումային կառույցները պետք է մեծ ջանքեր գործադրեն: ԵԱՏՄ տարածաշրջա-նում ներդրումների հոսքերի ակտիվացմանը մեծապես կնպաստի միասնական ներդրումային քաղաքականության մշակումը, որտեղ ներդրումները, հատկապես նոր տեխնոլոգիաների ներդրման ոլորտում, կկրեն առաջնային բնույթ: Անհրաժեշտ է կարևորել բարձր տեխնոլոգիաների ոլորտում գիտական հենքի

վրա իրականացվող ներդրումները. սա անմիջականորեն կնպաստի համաշխարհային շուկայում տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը:

7. ՀՀ տնտեսության զարգացման և ընդհանուր տնտեսական վիճակի բարելավման նպատակով նորարարական տեխնոլոգիաների ներդնումը և տնտեսության մրցակցային դիրքի պահպանումը պետք է պահպանվի որպես կայուն զարգացման ապահովման առաջնային ուղղություն: Սա միանշանակ խթանում է օտարերկրյա ներդրողներին՝ բարձրացնելով ներդրումային գրավչությունը: Օտարերկրյա ներդրողները հակված են առևտրային գործունեություն ծավալելու այնպիսի տնտեսական միջավայրում, որտեղ առկա են կապի, տրանսպորտի, ֆինանսական ոլորտի բոլոր ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող համեմատաբար էժան աշխատուժի առաջարկը:
8. Օտարերկրյա ներդրումների ներգրավման համար կարևոր է ընդլայնել պետության կողմից կիրառվող միջոցառումների ցանկը, հարկային և մաքսային մի շարք արտոնություններին զուգահեռ կիրառել նաև վարկային արտոնություններ փաթեթ, ինչպես նաև փոխհատուցել օտարերկրյա ներդրողների կրթական ծրագրերի ծախսերը: Սա կնպաստի աշխատուժի կրթական մակարդակի բարելավմանն ուղղված միջոցառումների ընդլայնմանը՝ պետական և մասնավոր հատվածների համագործակցությամբ:
9. ՀՀ համար կարևորվում է նաև գիտական և տեխնոլոգիական կլաստերների ստեղծումը: Նոր տեխնոլոգիաների ոլորտն, այս առումով, կարող է լինել առաջնակարգ դիրքերում: Կլաստերներում կենտրոնացնելով հզոր գիտական և տեխնիկական ներուժ՝ ամբողջ տարածաշրջանի և հատկապես ԵԱՏՄ անդամ երկրների համար այն կդառնա յուրահատուկ կրթական և գիտական կենտրոն: Գիտական և նոր տեխնոլոգիաների զարգացման ոլորտներում երկրի երիտասարդ բնակչությանը ներգրավվելու պետական քաղաքականությունը կապահովի նշված կլաստերների անընդհատ զարգացմանը և աշխատանքնային ռեսուրսների որակական առաջընթացին:

Ատենախոսության հիմնական դրույթներն հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական աշխատանքներում.

1. Մուրադյան Ա., Հայ-վրացական տնտեսական կապերի բարելավումը որպես տարածաշրջանային տնտեսական համագործակցության զարգացման գործոն // «Այլընտրանք» գիտական հանդես, ապրիլ-հունիս 2014 թ. #2, էջ 156-163:
2. Մուրադյան Ա., Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ներդրումային հնարավորությունները // «Այլընտրանք» գիտական հանդես, հուլիս-սեպտեմբեր 2015 թ. #3, էջ 96-104:
3. Մուրադյան Ա., Ինտեգրման գործընթացների առանձնահատկությունները Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրի շրջանակում // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #1-2 (185-186) 2016թ., էջ 70-73:
4. Մուրադյան Ա., ՀՀ, ԵԱՏՄ և հարևան պետությունների ներդրումային ոլորտում համագործակցության հնարավորությունների վերլուծությունը // «Այլընտրանք» գիտական հանդես, հունվար-մարտ 2016 թ. #1, էջ 332-341:

МУРАДЯН АРШАК КАРЕНОВИЧ

РАЗВИТИЕ РЕГИОНАЛЬНОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА КАК СТИМУЛ ПРИВЛЕЧЕНИЯ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ (НА ПРИМЕРЕ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 – «Международная экономика».

Защита диссертации состоится 14-ого июня 2016 г., в 14^{00} на заседании Специализированного совета по экономике 008 ВАК РА действующего при Российско-Армянском (Славянском) университете по адресу: 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению проблем и выявлению перспектив привлечения иностранных инвестиций в Республике Армения (РА) в контексте регионального экономического сотрудничества.

Решение основных экономических проблем в рамках регионального интеграционного объединения тесно связано с необходимостью улучшения инвестиционных и экономических отношений и структуры экономик, входящих в него стран для повышения конкурентоспособности, как самих этих стран, так и всего объединения в глобальной экономике. Анализ мирового опыта и история становления и развития новых независимых государств в постсоциалистический период показывают, что противостоять вызовам и угрозам XXI века можно лишь на базе многопланового и разностороннего межгосударственного инвестиционного сотрудничества.

Основной целью работы является выявление и оценка возможностей привлечения прямых иностранных инвестиций в РА в условиях развития регионального экономического сотрудничества. В соответствии с поставленной целью в работе сосредоточено внимание на решении следующих исследовательских задач:

- ✓ изучить эволюцию различных региональных интеграционных структур и проанализировать их характерные черты;
- ✓ определить влияние процессов регионального сотрудничества на привлечение иностранных инвестиций;
- ✓ на основе многостороннего анализа оценить инвестиционные возможности стран-членов Евразийского экономического союза, выявить наиболее предпочтительные сферы сотрудничества, которые окажут стимулирующее воздействие на экономический рост РА;

- ✓ выявить проблемы привлечения инвестиций в рамках Евразийского экономического союза (ЕАЭС) и предложить практические пути их решения;
- ✓ изучить текущую ситуацию в области инвестиционных отношений РА и соседних стран (Грузия и Иран) и, в контексте развития регионального экономического сотрудничества, выработать комплексные меры, направленные на стимулирование этих отношений;
- ✓ на основе количественного анализа оценить возможности инвестиционного сотрудничества между РА, соседними странами и странами-членами Евразийского экономического союза, выявить существующие проблемы и предложить новые подходы их решения.

В процессе исследования и анализа были получены следующие научные результаты, которые можно классифицировать как **научную новизну**:

- ✓ Разработан механизм регионального инвестиционного сотрудничества, в котором в качестве структурных элементов выделены принципы инвестиционного сотрудничества, стратегия развития, а также организационно-экономические аспекты, и обоснована целесообразность их использования в процессах региональной интеграции.
- ✓ С помощью линейной математической модели оценена зависимость внешней торговли и инвестиционного сотрудничества между Республикой Армения и другими странами-членами Евразийского экономического союза, и выявлено, что рост внешней торговли РА и стран ЕАЭС имеет прямое положительное воздействие на капиталовложения из этих стран.
- ✓ Оценена связь между макроэкономическими показателями и потоками иностранных инвестиций РА, соседних стран и стран-членов ЕАЭС. Построена эмпирическая модель, в которой выявлены и с помощью соответствующих коэффициентов представлены показатели, имеющие максимально положительное (объем промышленного производства, стабильность темпов инфляции, валютные шоки) или негативное (реальные шоки, монетизация ВВП) влияние на инвестиционные потоки.

ARSHAK KAREN MURADYAN

REGIONAL ECONOMIC COOPERATION DEVELOPMENT AS AN INCENTIVE OF FOREIGN INVESTMENTS ATTRACTION (ON THE EXAMPLE OF THE RA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.06 – «International Economics».

The defense of the thesis will take place on June 14th, 2014 at $14^{\underline{00}}$ o'clock at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian (Slavonic) University: 123 Hovsep Emin str., Yerevan 0051.

R E S U M E

The thesis is devoted to the identification of problems and prospects of attracting foreign investment in the Republic of Armenia (RA) in the context of regional economic cooperation.

The solution of basic economic problems in the framework of regional integration unions is closely linked to the need of improving the investment and economic relations, as well as the economic structure of member countries, which aims to enhance both the competitiveness of individual economies and the competitiveness of the union in global economy. Analysis of international experience and the history of the development of new independent states in the post-socialist period show that the challenges and threats of the XXI century can be confronted only based on a multi-faceted and versatile interstate investment cooperation.

The main objective of the thesis is the identification and assessment of opportunities for attracting foreign direct investment in RA, in terms of development of regional economic cooperation. In accordance with the aim, the following issues have been identified and proposed in the present study:

- ✓ to study the evolution of the different regional integration structures and to analyze their characteristics;
- ✓ to determine the effect of the processes of regional cooperation on foreign investment attraction;
- ✓ on the basis of comprehensive analysis to evaluate investment opportunities of Eurasian Economic Union member states and to identify the most preferred areas of cooperation that will promote the economic growth of the Republic of Armenia;

- ✓ to identify issues of attracting investments in the framework of the Eurasian Economic Union and to propose practically possible solutions;
- ✓ to study the real situation of investment relations between RA and neighboring countries (Georgia and Iran) in the context of regional economic cooperation and to develop complex of measures stimulating these processes;
- ✓ based on multilateral quantitative analysis to evaluate the possibilities of investment cooperation between the Republic of Armenia, neighboring countries and the member states of the Eurasian Economic Union, to identify existing problems and to propose new approaches of solutions.

The following scientific results were obtained in the process of analysis, which can be classified as a **scientific novelty**:

- ✓ The mechanism of regional investment cooperation has been designed, wherein principles of investment cooperation, development strategy, as well as organizational and economic aspects have been stressed out as structural elements, the feasibility of their use in regional integration processes has been justified.
- ✓ The author has estimated the dependence of foreign trade and investment cooperation between the Republic of Armenia and the member countries of the Eurasian Economic Union with the help of a linear mathematical model. It has been revealed that the foreign trade growth of the Republic of Armenia and the EAEU countries has a direct positive impact on investments from these countries.
- ✓ The dependence of macro-economic indicators and the flow of foreign investments of the RA, neighbor countries and member countries of the Eurasian Economic Union has been evaluated. An empirical model has been designed, in which the author has identified and by means of appropriate coefficients presented the indicators which have maximum positive (volume of industrial production, stability of inflation, currency shocks) or negative (real shocks, monetization of GDP) impact on investment flows.